ՊԱՇՏՕՆԱԿԱՆ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԸՆԴՈՒՆԵՑ ՇՎԵՅՑԱՐԻԱՅԻ ԴԵՍՊԱՆԻՆ

Մայիսի 23-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը հրաժեշտի հանդիպում ունեցավ Հայաստանի Հանրապետությունում Շվեյցարիայի Համադաշնության արտակարգ եւ լիազոր դեսպան Կոստանտին Օբոլենսկիի հետ:

Հանդիպմանը Վեհափառ Հայրապետը շնորհակալություն հայտնեց դիվանագիտական առաքելությունը Հայաստանում ավարտող դեսպանին՝ անցնող տարիների ծառայության ու հայ-շվեյցարական կապերի ամրապնդման գործում ներդրած ջանքերի համար:

Նորին Սրբությունն իր խոսքում կարեւորեց երկու երկրների միջեւ ձեւավորված բարեկամական հարաբերությունների հետագա սերտացումն ու զարգացումը, ապա անդրադարձավ Շվեյցարիայի հայկական համայնքի ազգային-հոգեւոր կյանքին, ի դեմս դեսպանի իր գնահատանքը հայտնելով երկրի իշխանություններին՝ համայնքի հանդեպ դրսեւորվող հոգատար վերաբերմունքի համար:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը նաեւ գոհունակություն հայտնեց Շվեյցարիայի իշխանությունների կողմից տարածաշրջանում առկա խնդիրների նկատմամբ ցուցաբերվող ուշադրության եւ դրանց հաղթահարման ուղղությամբ ներդրված քայլերի առիթով:

Զրույցի ընթացքում անդրադարձ կատարվեց տարածաշրջանում խաղաղության հաստատմանն ուղղված տարածաշրջանի երկրների հոգեւոր առաջնորդների ջանքերին, ինչպես նաեւ Հայոց Ցեղասպանության 100-ամյա տարելիցի առիթով Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու կողմից ծրագրվող միջոցառումներին:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԸՆԴՈՒՆԵՑ ՉԵԽԻԱՅԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆԱԽԱՐԱՐԻՆ

Մայիսի 27-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Չեխիայի Հանրապետության մշակույթի նախարար Ալենա Հանակովայի գլխավորած պատվիրակությանը՝ ուղեկցությամբ ՀՀ մշակույթի փոխնախարար Արթուր Պողոսյանի:

Շվեյցարիայի դեսպանը Մայր Աթոռում

Ալենա Հանակովան Մայր Աթոռում